



«Բարձրագույն նպատակը, որին կարող է ծառայել արվեստը, այն է, որ մարդիկ ավելի խորը հասկանան կյանքը և ավելի սիրեն այն».

Ռոբրտել Քենթ

Վիգեն Ավետիսյան

Արվեստը հասարակության գիտակցության ձևերից մեկն է: Այն օգնում է ճանաչել աշխարհը, ձևավորում է մարդկանց հոգևոր նկարագիրը, նրանց զգացմունքներն ու նտքերը, նրանց աշխարհայացքը, ընդլայնում մտահորիզոնը, արթնացնում ստեղծագործական ընդունակություններ: Արվեստի ամենազգայական տեսակներից է քանդակագործությունը: Արվեստի այս տեսակը մտածելու մեծ հնարավորություն է ընձեռում ինչպես քանդակագործին, այնպես էլ դիտողին: Քանդակագործությունը մտքի ու հոգու թռիչքի դրսևորման ինքնատիպ տարբերակ է: Քանդակագործության խորհրդավոր աշխարհի, մասնագիտության առանձնահատկությունների և ընձեռած հնարավորությունների մասին զրուցել ենք Դոնատելլոյի անվան նկարիչների և «40 Ֆլորենտացիներ» միությունների անդամ, Ֆլորենցիայի ոսկե ֆիդոլիոյի մեդալակիր, ԳԳ մշակույթի նախարարության «Գրիգոր Նարեկացի» մեդալակիր, քանդակագործ Վիգեն Ավետիսյանի հետ, ում ստեղծագործությունները տեղադրված են աշխարհի տարբեր երկրներում:

# ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԻ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԱՇԽԱՐՀԸ

- **Ինչպե՞ս կրճտորչեք արվեստի այս յուրօրինակ ճյուղը:**  
- Քանդակագործությունն արտահայտվելու լեզու է, ժավալային արտահայտչաձև է: Այն ժամանակից և տարածությունից դուրս է՝ տիեզերական, անսկիզբ և անվերջ, որն իր մեջ անբողջացնում է ամենատարբեր մասնագիտություններ ու ոլորտներ, ինչպես օրինակ՝ նկարչություն, պատմություն, գրականություն, փիլիսոփայություն և այլն: Իսկական քանդակագործի դեպքում ժավալային, տարածական մտածելաձևը պետք է դառնա մտածելակերպ: Հակառակ դեպքում կդառնա ժամանակավոր զբաղմունք, ոչ մասնագիտական: Ըստ այդմ էլ տարբերակվում է սիրողական և պրոֆեսիոնալ քանդակագործություն: Սիրողական քանդակագործության դեպքում էլ չի բացառվում, որ կարող են ծնվել հանճարեղ գործեր: Բարձր արդյունք է ստացվում, երբ ձեռքը ենթարկվում է մտքիդ, հոգուդ, սրտիդ: Երբ հանդիպում են ազնիվ միտքն ու արդար ձեռքը, հրաշք է ծնվում: Արվեստի թևերով թռչում են ապագա, ժամանակն ու տարածությունը դառնում են օդ, և մշտապես տիրում է լույսը:

- **Ի՞նչը կարող է ոգեշնչել քանդակագործին:**  
- Քանդակը նյութականացված երաժշտություն է: Քանդակագործի համար ոգեշնչման աղբյուր կարող է լինել Կոմիտասի և դասական գլուխգործոցների ունկնդրումը:

- **Ի՞նչ որակներ է պահանջում քանդակագործի մասնագիտությունը:**


- Լավ քանդակագործ դառնալու համար նախ պետք է նվիրվել ամենացորդ: Դա նշանակում է մտնել մի աշխարհ, որն անվերջ ուսանելու աշխարհ է, այդ ճանապարհը կատարելագործումն է, որը անվերջ է, անսպառ է: Սակայն չկա ոչ մի երաշխիք, որ նվիրյալը կհասնի արդյունքի: Քանդակները կարող են մեծարվել Լուվրում կամ մոռացվել աղբարկղում: Արվեստում չկա միջինի հասկացողությունը: Քանդակագործի մասնագիտության մեջ հմտանալու համար անհրաժեշտ նախապայմաններն են՝ հավատ առ Քրիստոնեություն, աշխատասիրություն, համառություն, գիտելիքների իմացություն և իմաստություն, ուղերձ, որը ծնվում է անձի հմտության և երաժշտության համադրությամբ: Շատ կարևոր է նաև յուրացնել համաշխարհային արվեստի պատմությունը, ուսումնասիրել արվեստի բոլոր ճյուղերը, գործերը, նկարները, քանդակները: Կարևոր է լավ տիրապետել մայրենի լեզվին: Եվ, իհարկե, անհատական ճանապարհով հասնել վերջնական արդյունքի:



«Չայրոց մայր» հուշարձանը, Ֆլորենցիա, 2014 թ.



«Քրիստոս հարիավ ի մեռելոց» քանդակը, Ֆլորենցիա, Սբ. Ֆելիչե եկեղեցի, 2016 թ.



«Մասնա ծռեր, Ծովինարը Սանասարի և Բաղդասարի հետ», Երևան, 2008 թ.



«Մ. Մ. Ֆրեսկոբալդի», Ֆլորենցիա, 2011 թ.

- **Ձեր խորհուրդն այն պատանիներին, ովքեր հետաքրքրվում են արվեստի այս ճյուղով:**

- Մասնագիտության ընտրությունը կյանքի կարևորագույն որոշումներից մեկն է: Խորհուրդս պատանիներին մեկն է. ինչ մասնագիտություն էլ, որ կընտրեք, առաջնորդվեք արվեստով, հաճախակի այցելեք թանգարաններ, ցուցահանդեսներ, ծանոթացեք քարե ու բրոնզե դարերի հայ կերպարվեստին, ձևավորեք գեղարվեստական ճաշակ արվեստի բոլոր բնագավառներից, կազմակերպեք հանդիպումներ մեծանուն վարպետների հետ:

Ջրուցեց Լեյլա Մարգարյանը